

ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԸՆԿ. Վ. ՂԱԶԱՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԻՑ

Ընկերնե՛ր. չենինի անվան Համա-
միութենական Գյուղատնտեսական
Գիտությունների Ակադեմիայի օգոս-
տոսյան սեսիան, որի արդյունքների
մասին մանրամասն զեկուցեց ընկ.
Բաբաջանյանը, գյուղատնտեսական և
բիոլոգիական գիտությունների աշխա-
տողների համար մեծագույն նշանա-
կություն ունի:

Այդ սեսիայի արդյունքներն ավելի
քան կարևոր են երիտասարդ բիոլոգ-
ների համար և մանավանդ նրանց
համար, որոնք ֆորմալ և միշտերինյան
գենետիկայի ասպարեզում մեզ մոտ
երկար ժամանակ շարունակվող դիս-
կուսիայի հետևանքով շէին կարողա-

նում ճիշտ կողմնորոշվել: Պետք է ա-
սել, որ մի շարք հետազոտողներ ան-
տեսում են ստադիականության տե-
սությունը և առաջ են քաշում բույսե-
րի ծաղկման մետաֆիզիկ հորմոնալ
«տեսությունը»: Ես նկատի ունեմ մեր
Ակադեմիայի անդամ-թղթակից պրոֆ.
Չայլախյանին, ըստ որի բույսերի
ծաղկումը և սերմակալումը պայմա-
նավորված է ծաղկման հորմոնով, ֆլո-
րիդենով, որն առաջանում է տերևի
մեջ, համապատասխան օպտիմալ ֆո-
տոպերիոդների պայմաններում: Մա է
հիմնական այն բոլորը, ինչի վրա 14
տարի է, ինչ աշխատում է պրոֆեսոր
Չայլախյանը: